<<էդիթ Պրինտ>> հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝

ԱԶԳԱՅԻՆ, ԾԻՍԱԿԱՆ, ՇԱՐԺՈՒՆ ԽԱՂԵՐԻ ԴԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հաստատություն՝ Արզականի մսուր մանակապարտեզ

Դաստիարակ՝ Նարինե Հովհաննիսյան

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

2022-2023ուստարի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մանկավարժական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում:
2. Ազգագրություն. Ազգային, ծիսական, շարժուն խաղերի նկարագրություն
3. Գործնական մաս. Ազգային, ծիսական, շարժուն խաղերի դերը երեխայի զարգացման գործում:
4. Միջոցառման ծրագիր
5. Եզրակացություն
6. Օգտագործված գրականություն

Ներածություն

Ակտիվությունը ապահովում է երեխայի օրգանիզմի կենսագործունեությունը: Դրանով է պայմանավորված ֆիզիկական գործունեության կարևորությունը նախադպրոցական հաստատություններում: Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման գործում ֆիզիկական դաստիարակության համար կարևոր տեղ են գրավում շարժական, ազգային, ծիսական խաղերը: Ազգային ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթը յուրացրած, ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Այն մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող՝ մի շարք խնդիրների լուծման համար: Ծեսը, որպես միասնական, բազմաբնույթ, ինտեգրված գործունեություն, նպաստում է մանկապարտեզ, ընտանիք, համայնք արդյունավետ համագործակցությանը: Մանկապարտեզում ծեսի միջոցով սանի զարգացման գործընթացն արդյունավետ է, այն իր մեջ ոչ միայն ներառում է երեխայի համար կարևոր գործունեության ձևերը, այլև իրագործվում է լավագույն ազգային նյութով: Աշխատանքը կհետաքրքրի դաստիարակներին, ծնողներին և այլ հետաքրքրվող անձանց:

Մանկավարժական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Երեխայի անձի ձևավորման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Երեխայի զարգացման և նրա անձի ձևավորման գործընթացները փոխկապված են: Անձնավորությունը մարդու սոցիալական նկարագիրն է և բնութագրում է մարդկային այն որակները, որոնք ձեռք են բերվում հասարակության մեջ՝ մարդկանց հետ հարաբերվելու ընթացքում:

Անձնավորության հիմնական չափանիշներն են գիտակցությունը և ինքնագիտակցությունը, որոնք մարդուն դարձնում են ինքնուրույն և վերափոխող գործունեության ընդունակ: Մարդու զարգացումը բարդ, երկարատև և հակասություններով լի գործընթաց է, որի ընթացքում քանակական փոփոխությունները վերածվում են որակի և բոլոր փոփոխությունները փոխպայմանավորված են:

Երեխայի զարգացմանը, ինչպես նաև նրա անձնավորության ձևավորմանը նպաստող խթանները պայմանականորեն միավորում են երեք խմբի՝ կենսաբանական, սոցիալական և մանկավարժական:

Մանկավարժական գործոնների շարքին է պատկանում երեխայի ինքնուրույն գործունեությունը, որը խրախուսվում և ձևավորվում է մեծահասակների մանկավարժական ներգործության շնորհիվ: Ինքնուրույնության դրսևորումները խթանում են երեխայի զարգացման գործընթացը, նպաստում նոր հաջողությունների ու նվաճումների: Երեխայի ինքնուրույնության արգելակումը մեծահասակների կողմից բացասաբար է անդրադառնում և խոչընդոտում է նրա ընդհանուր զարգացման գործընթացը: Երեխայի ինքնուրույնությունը՝ նրա զարգացման և անձնավորության ձևավորման կարևորագույն գործոն է:Երեխայի զարգացման գործընթացում բավական պատասխանատու է մանկավարժական գործոնների դերը:

Նախադպրոցական մանկավարժության դասընթացը ամենայն պատասխանատվությամբ է վերաբերվել նախադպրոցական տարիքում առաջատար՝ խաղային գործունեության նշանակությանը նախադպրոցականի կյանքում: Խաղի ծագման և էության մասին բազմաթիվ տեսությունների մանկավարժական վերլուծության հիման վրա հոգեբանորեն հիմնավորվել և մեկ-նաբանվել է խաղի ժամանակակից տեսությունը: Երեխայի զարգացմանը նպաստում է զարգացնող միջավայրը, որը երեխայի զարգացման դրդող «առարկայական տարածությունն» է և համարժեք բարոյահոգեբանական մթնոլորտը:

Սոցիալական միջավայրից բացի սոցիալական գործոնների խմբին են դասվում երեխայի ակտիվության սոցիալական ձևերը: Մարդկային գոյատևման հիմնական ձևը շարժումն է: Ակտիվությունը կենդանի օրգանիզմի հատկությունն է, զարգացման կարևորագույն նախապայմանը: Պրենատալ շրջանից սկսած երեխան արձագանքում է աշխարհին ակտիվ գործողություններով: Երեխային բնորոշ են ակտիվության տարբեր դրսևորումներ, որոնք նպաստում են նրա ընդհանուր զարգացմանը և օգնում կողմնորոշվելու միջավայրում: **Ֆիզիկական ակտիվությունը** ապահովում է երեխայի օրգանիզմի կենսա-գործունեությունը: **Իմացական ակտիվությունը** նպաստում է աշխարհճանաչմանը, իսկ **ինտելեկտուալ ակտիվու-թյունը՝** ինքնահաստատմանը նոր միջավայրում: **Հուզական ակտիվությունը** դիմացինի հետ հաղորդակցվելու հրա-շալի միջոց է, համագործակցության առաջին դրսևորումը: Վերջապես, երեխան աստիճանաբար ձեռք է բերում **սոցիալական ակտիվություն**, որը դրսևորվում է գործունեության տարբեր ձևերով: Գործունեության դրդապատճառը ակտիվությունն է: Գործունեությունը սոցիալական ակտիվության դրսևորում է, քանի որ այն ուղղված է պահանջմունքների բավարարմանը: Երեխայի խաղային գործունեությունը հնարավորություն է տալիս բավարարելու նրա ակտիվությունն այն բնագավառներում, որտեղ անհնար են իրական գործողությունները: Խաղային գործունեության միջոցով է երեխան առաջին հերթին բավարարում իր սոցիալական ակտիվության պահանջմունքը:

Սոցիալական ակտիվության դրսևորում է նաև **աշխատանքային գործունեությունն՝** ուղղված աշխատանքի արդյունք ստանալու և հասարակության անդամ լինելու պահանջմունքը: Երեխան հակված է սոցիալական ակտիվության, նա ունի դրա կարիքը, սակայն երբ այդ ակտիվությունը լիարժեք չի դրսևորվում՝ բացակայում են գործունեության դրսևորման համար անհրաժեշտ պայմանները, նա փորձում է իր սոցիալական գոյության մասին հայտնել այլ՝ հաճախ անընդունելի եղանակներով՝ չարությամբ, գերակտիվությամբ, անկարգությամբ, ագրեսիվ վարքագծով: Վաղ տարիքի երեխաների զարգացումն ընթանում է որոշակի օրինաչափություններով, որոնք դրսևորվում են տարիքը բնութագրող առանձնահատկություններով: Վաղ տարիքի երեխաներին բնորոշ են զարգացման հետևյալ առանձնահատկությունները:

Ֆիզիկական և հոգեկան զարգացում

Կյանքի առաջին երկու տարիներին երեխան սովորում է տեղաշարժվել ուղղաձիգ քայլքի միջոցով, հաղորդակցվել խոսքի օգնությամբ, հարաբերվել առարկայական աշխարհի հետ, կառավարել սեփական մարմինը և արձագանքել աշխարհին հույզերով: Դառնում է ինքնուրույն, համեմատաբար անկախանալով մեծահասակներից:

Այս տարիքում ֆիզիկական զարգացման ձեռքբերումները դրդում են հոգեկան ակտիվության, իսկ հոգեկանի զարգացման լիարժեք ընթացքը նպաստում է երեխայի օրգանիզմի ամրապնդմանը, ֆիզիկական աճին: Ֆիզիկական, ինչպես նաև հոգեկանի զարգացման հիմքում ընկած է նյարդային համակարգի հասունացումը, բարձրագույն նյարդային գործունեությունը:

Զգայարանների զարգացում

Վաղ տարիքի երեխաներին բնորոշ է զգայական գործառույթների բուռն զարգացում, որոնք առաջանցիկ են շարժումների հետ համեմատությամբ (կենդանիների մոտ ճիշտ հակառակն է): Զգայական գործընթացների առաջնային զարգացումն ապահովում է հուզական աշխարհճանաչումը և նպաստում առարկայական աշխարհի անմիջական ընկալմանը: Զգայարանների գործունեության արդյունքում ձևավորվում են տեսողական և լսողական, համի և հոտի, գունային և տարածական զգայություններ, որոնք իմաստավորում են աշխարհճանաչման գործընթացը:

Խոսքի և հաղորդակցության զարգացում

Վաղ տարիքը երեխայի խոսքի բուռն զարգացման շրջան է: Եթե մեկ տարեկան երեխան օգտագործում է 10-15 բառ, ապա երեք տարեկան երեխայի ակտիվ բառապաշարը բաղկացած 1.000-ից ավելի բառերից: Ակտիվ խոսքի կարողությունները պայմանավորված են աստիճանաբար հարստացող պասիվ բառապաշարով, որը զգալի հզոր է ակտիվից: Խոսքի ձևավորումը վաղ տարիքում ընթանում է հետևյալ հաջորդականությամբ. սկզբից ընկալվում և յուրացվում է բառերի իմաստային նշանակությունը, և այդ բառերն իրենց տեղն են գտնում երեխայի պասիվ բառապաշարում, որից հետո համապատասխան հարմար իրավիճակում դրանք ակտիվանում են, այն է՝ սկսում են օգտագործվել ակտիվ խոսքում և փոխանցվում են, կարծես, երեխայի ակտիվ բառապաշար: Վաղ տարիքի ամենակարևոր ձեռքբերումը **խոսքային հաղորդակցումն** է, որն արդյունք է խոսքի տիրապետման և մտածողության զարգացման:

Խաղային գործունեության տարրերը սկսում են դրսևորվել երեխայի առարկայա-խաղային ակտիվության պայմաններում, երբ ինքնուրույն առարկայական գործողությունների արդյունքում առարկաների նկատմամբ առաջանում է խաղային վերաբերմունք:

Երեխայի **առարկայա—խաղային** ակտիվությունը դրսևորվում է հետևյալ ձևով.

- երեխան փորձում է առարկաներն օգտագործել տարբեր նպատակներով
- համադրում և հաճախ միավորում է առարկաների հիմնական գործառույթները
- փորձում է գտնել առարկաների կիռարման հետաքրքիր եղանակներ, վերագրելով դրանց անսովոր նոր գործառույթներ
- առարկաները սկսում է օգտագործել որոշակի դերային նշանակությամբ
- շնչավորում է առարկաները և շփվում դրանց հետ խոսքի միջոցով, խոսում է՝ բացատրելով սեփական գործողություններն ու նպատակները, վերաբերվում նրանց իբրև շնչավոր մասնակիցների
- խոսքային հաղորդակցման և նշված վերաբերմունքի արդյունքում կառուցվում է սյուժե
- առարկաների բազմաֆունկցիոնալ օգտագործման հիման վրա ձևավորվում է առարկաները մեկը մյուսով փոխարինելու կարողությունը, փոխարինման գործառույթը դառնում է գերակշռող խաղային գործունեության ընթացքում

Այսպիսով, առարկայական գործունեության հիման վրա գոյանում է **առարկայա—խաղային գործունեությունը**, որն աստիճանաբար վերափոխվում է արտացոլող բնույթի **սյուժետա—դերային խաղի:**

Խաղային գործունեության նախադրյալների հետ մեկտեղ առարկայական գործունեությունը պայմաններ է ստեղծում և նպաստում է արդյունավետ **գեղարվեստական գործունեության** (նկարչության, ծեփի, կառուցողական գործունեության) տարրերի դրսևորմանը:

Երեխայի սոցիալական զարգացումը

Վաղ տարիքը երեխայի անձնավորության ձևավորման առաջին փուլն է, քանի որ առաջին սոցիալական փորձը նույնպես ձեռք է բերվում այս տարիքում: Երեխայի կենսական պահանջների լիարժեք բավարարման պայմաններում կյանքի առաջին ամսից աստիճանաբար ի հայտ են գալիս **սոցիալական բնույթի պահանջմունքներ**, որոնք ենթակա են բավարարման միայն մեծահասակների հետ անմիջական շփման ընթացքում: Դրանք են՝

- հաղորդակցման
- դրական հուզականության
- մարդկային կենսակերպի ձևերի և հարաբերությունների յուրացման պահանջմունքները

Հետազոտությունների համաձայն երեխայի առաջին սոցիալական արձագանքը դրսևորվում է 1.5-2 ամսականում: Այն սոցիալական պահանջմունքների բավարարման կանչ է և դրսևորվում է հուզաշարժողական հետևյալ ռեակցիաների ձևով.

- ձեռքերի և ոտքերի ակտիվ շարժումներով
- դիմախաղով, մասնավորապես, ժպիտով և աչքերի փայլով
- առանձին հնչյունների անմիջական արտաբերմամբ

Սոցիալական զարգացումը վաղ տարիքում ընթանում է արագ տեմպերով և ուղղակի պայմանավորված է մեծահասակների ակտիվ մասնակցությամբ:

Երեխան վաղ տարիքում իր սոցիալական առաջին փորձը ձեռք է բերում մեծահասակների օգնությամբ, որոնց հետ ակտիվ համագործակցելով յուրացնում է մարդկային փոխհարաբերությունների բնույթը, սովորում է սեփական ցանկություններն ու զգացմունքները դրսևորել որոշակի վարքագծով: Երեխայի կողմից սեփական ցանկությունների համադրումը գործողությունների հետ հնարավոր է դարձնում բարոյական դաստիարակության նպատակասլաց գործընթացը: Բարոյական դաստիարակությունը նույնպես սկսվում է վաղ տարիքից:

Ուսուցման մեթոդներ

Նախադպրոցական դիդակտիկայում կիրառվում են ժամանակակից խաղային և ակտիվ ուսուցման մեթոդներ:

Խաղային մեթոդներ

Նախադպրոցականի ուսուցման պրակտիկայում առավել արդյունավետ են **խաղային մեթոդները:**

Խաղային մեթոդների առավելությունները պայմանավորված են խաղային մթնոլորտի բարձր հուզականությամբ, երեխայի համար խաղի բնական և հոգեհարազատ բնույթով: Ուսուցանող են խաղի բոլոր տեսակները: Սակայն ուսուցմանը հատուկ ուղղված են **դիդակտիկ խաղերը,** որոնք կատարում են երկու կարևորագույն գործառույթ.

- խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացումը
- նպաստում են գիտելիքների ամրապնդմանը, գործածմանը և կատարելագործմանը

Հետաքրքիր խաղային մեթոդ է **երևակայական իրադրությունների խաղարկումը,** որի ընթացքում երեխայի գիտելիքները և կարողությունները ձեռք են բերվում պարտադրված դերային գործողությունների միջոցով: Ուսուցման խաղային մեթոդները խաղային հնարների բազմազանության հաշվին ունեն տարբերակված կիրառության լայն հնարավորություններ և հաջողությամբ օգտագործվում են նախադպրոցականին բոլոր ուղղություններով զարգացնելու ընթացքում: Զարգացման հրաշալի մեթոդ է խաղի յուրաքանչյուր տեսակ:

Ուսուցման գործնական մեթոդները

Նախադպրոցականի ուսուցման գործընթացում այսօր առաջատար են համարվում ուսուցման գործնական մեթոդները, որոնց խմբին դասվում են տարատեսակ.

- վարժությունները
- փորձերը, փորձարարությունը (հետազոտումը)
- մոդելավորումը

Վարժությունները լինում են տարբեր բնույթի՝ ընդօրինակող, կառուցողական և ստեղծագործական: Ուսուցանող, աստիճանաբար բարդացող վարժություններն իրենց ուրույն տեղն են զբաղեցնում նախադպրոցականի մտավոր դաստիարակության համակարգում: Վարժությունները հետաքրքրում են երեխաներին նրանով, որ դրանք օգտագործվում են ուսուցման ընթացքում որպես խաղային, պրակտիկ կամ աշխատանքային գործունեության մասնաբաժիններ և նպաստում են մտավոր զարգացմանը միջնորդված եղանակով:

Ազգագրություն. Ազգային, ծիսական, շարժուն խաղերի նկարագրություն

Ազգային ծեսը մանկան ընդհանուր զարգացման միջոց

«… Ամենամեծ ու ամենացանկալի նորամուծությունը կրթության ասպարեզում այսօր այն կլինի, որ ինչ-ինչ պատճառներով իր արմատներից հեռացած ժողովրդին վերադարձվի իր իսկ ստեղծածը: Հայ մեծագույն մանկավարժները ամենամեծ դպրոցը համարել են ժողովրդական դպրոցը և իրենց ստեղծած կրթական համակարգը փորձել են մոտեցնել ժողովրդական դպրոցին, որովհետև վերջինս առավելագույն արդյունքներին հասել է բնության թելադրած պարզագույն միջոցներով»:

Ազգային բակային խաղերի նկարագրություն

Պախկվոցի

Նա, ով պետք է աչքերը փակի, կանգնեցնում են պատի առջև: Նա հաշվում կամ արտասանում է, իսկ մյուսները թաքնվում են: Աչքերը փակողը բաց է անում աչքերը և սկսում որոնել թաքնվածներին: Եթե մեկին գտնում է, ձեռքով խփում է, իսկ երբ չի կարողանում խփել. թաքնվողը վազում բույնն է հասնում, թքում է, ազատում է, եթե ոչ՝ ինքն է փակում աչքերը:

Մուկն ու կատուն

Խաղում են 20-25 հոգով: Երեխաներից մեկը ընտրվում է մուկ, մյուսը՝ կատու: Երեխաները ձեռք ձեռքի բռնած՝ շրջան են կազմում, մուկը վազում է շրջանի շուրջը՝ կատվից փախչելով: Երեխաներն օգնում են մկնիկին, որպեսզի մտնի շրջանի մեջ, որ կատուն չկարողանա բռնել նրան: Երբ բռնում է, ուրիշ զույգ է դառնում մուկ ու կատու:

Կարմիր կոճակ: Երեխաները նստում են աթոռներին, ձեռքերը մեկնում են առաջ՝ ափերն իրար կպցրած: Խաղավարը իր ափի մեջ թաքցնում է կարմիր կոճակը, մոտենում է յուրաքանչյուր երեխայի ու նրա ափի մեջ մտցնելով իր ձեռքերը՝ կոճակը թաքուն գցում է երեխաներից մեկի ձեռքերի մեջ: Ընթացքում կարող է որևէ խաղերգ արտասանել: Վերջացնելուց հետո ասում է. — Կարմի՛ր կոճակ, դո՜ւրս արի:

Գործնական մաս. Ազգային, ծիսական, շարժուն խաղերի դերը երեխայի ֆիզիկական զարգացման գործում

Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երեխաների ուսումնառությունը և զարգացումը բազմակողմանի է, քանի որ ֆիզիկական զարգացմանը զուգընթաց զարգանում է երեխայի խոսքը և լեզուն, զգացմունքները, սոցիալական շփման և իմացական կարողությունները: Հետևաբար ուսումնառության բոլոր ոլորտները կարևոր են առողջ զարգացման համար: Ֆիզիկական դաստիարակությունը անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման կարևոր բաղադրիչն է: Ֆիզիկական դաստիարակության նպատակն է պահպանել և ամրապնդել երեխայի առողջությունը, կոփել օրգանիզմը, ապահովել ֆիզիկական և հոգևոր ներդաշնակ զարգացումը, ժամանակին ձևավորել երեխաների շարժողական կարողություններն ու հմտությունները, զարգացնել կենսական նշանակություն ունեցող շարժումները, զարգացնել հետաքրքրություն շարժողական գործունեության զանազան ձևերի նկատմամբ, դաստիարակել՝ անձի բարոյակամային հատկանիշներ.

- ինքնուրույնություն
- ակտիվություն
- մարդկային փոխհարաբերությունների կուլտուրա

ֆիզիկական որակներ.

- ճարպկություն
- արագաշարժություն
- դիմացկունություն

Ֆիզկուլտուրայի յուրաքանչյուր պարապունքին իրականացվում է երեք կարևոր խնդիր՝ առողջապահական, կրթական, դաստիարակչական:Ֆիզկուլտուրայի պարապմունքը ամբողջությամբ կազմված լինելով տարբեր բնույթի շարժումներից՝ ակտիվ աշխատանքի մեջ է ընդգրկում երեխայի օրգանիզմը:

Մենք՝ հայերս, ունենալով բազմադարյան պատմություն, ունեցել ենք բազմաթիվ ազգային տոներ և ծեսեր, որոնցից մի մասը տարիների ընթացքում ընթարկվելով փոփոխությունների, պահպանվել են մինչ օրս: Իսկ ինչ ծես առանց ծիսական երգերի, խաղերգերի, խաղերի: Երեխային ծեսի մեջ ներառելու լավագույն և արդյունավետ միջոցը խաղն է: Ունենալով հարուստ ծիսական ավանդույթներ, ազգային տոներ՝ մենք պարտավոր ենք մեր երեխաներին ներգրավել այդ ամենի մեջ (եթե ոչ ամբողջությամբ, գոնե որոշակի չափով): Տոնի կամ ծեսի ակտիվ մասնակիցը ոչ միայն մեծերը պետք է լինեն(դաստիարակ, ծնող, տատիկ ու պապիկ), այլև հենց ինքը՝ երեխան: Ծեսի իրականացումն իր մեջ ներառում է երգ-պար, բանահյուսություն, գրականություն, կերպարվեստ-ձեռարվեստ, թատրոն, բնագիտություն և խաղ: Ծիսական խաղերը՝ հատկապես շարժուն խաղերը մեծ դեր ունեն նախադպրոցական տարիքի երեխայի ֆիզիկական զարգացման գործում:

Բարեկենդան – Բարեկենդանը հայկական ամենահին տոներից է, որը հայերի ամենաուրախ տոնն է եղել: Բարեկենդանին խաղացել են բազմաթիվ ծիսական խաղեր՝ որոնցից ամենատարածվածներն են «Աքլորակռիվ», «Գնացեք, տեսեք», «Խնոցի, հարոցի», «Պարան ձգոցի», «Գոմշակռիվ» և այլն:

«Աքլորակռիվ» – Աջ ձեռքով մեջքի կողմից բռնում են ծալված ձախ ոտքը և թռչկոտելով աջ ոտքի վրա՝ այնքան են ուսով թեթևակի իրար խփում, մինչև խաղացողներից մեկը վայր է ընկնում և պարտվում է: Այս և այլ նմանատիպ խաղերի միջոցով երեխայի մոտ զարգանում է հավասարակշռությունը պահելու, կառավարելու կարողությունը, մեկ ոտքի վրա ցատկելու ունակությունը, ձևավորվում է մարդկային փոխհարաբերության կուլտուրա:

«Խնոցի, հարոցի» — Խաղում են զույգերով: Նստած կամ կանգնած դիրքով զույգերը դեմքով իրար են նայում: Մի խաղացողի երկու ձեռքերի մատները հագցրած են դիմացինի մատներին՝ ափը ափին կպած:

Ամանորյա ծես.

Ամանորյա ծեսն ազգային ծեսերից առաջինն էր, որի հետ ծանոթացանք մանկապարտեզում, ուսումնասիրեցինք և պատրաստվեցինք: Նախ կազմվեց սցենար, սովորեցինք ծիսական, ազգային երգեր, պարերգեր, պատրաստեցինք ծիսական պարագաներ, խաղարկեցինք ծիսական գործողություններ: Զարդարեցինք ամանորյա կենաց ծառը, ներկայացրեցինք դրա խորհուրդը, երգեցին ծիսական երգեր, Սուրբ Ծննդյան «Ավետիս»-ներ: Երեխաների հետ միասին խաղացինք ընկուզախաղեր: Քանի որ ծեսն իրականացնում էինք առաջին անգամ, մի փոքր անսովոր էր, բայց և չափազանց հետաքրքիր: Նախապատրաստական աշխատանքների մեջ էր մտնում ազգային, ծիսական երգերի ուսուցում, կատարումը: Ժողովուրդը ստեղծել է այնպիսի ծիսական երգեր, որոնցում արտահայտվում է ծեսի հիմնական գաղափարը, միտքը, և դրանք կատարվում են հատուկ ծիսական գործողություններով՝ ծիսական կերպարների, մասնակիցների կողմից: Երգի ուսուցումը կատարվեց «անընդմեջ ուսուցման» մեթոդով, որը արդյունավետ էր, յուրացրեցինք արագ, հեշտ: Ինձ համար հետաքրքիրն այն էր, որ ինչքան էլ հստակ պատկերացնես և նախագծես անելիքդ, ծեսի իրագործման ընթացքում անընդհատ ստեղծագործելու, իմպրովիզներ կատարելու հնարավորություն կա: Սա շատ կարևոր հանգամանք է, քանի որ երեխաների հետ աշխատանքը նրանց ազատ ստեղծագործելու, երևակայելու հնարավորություն է տալիս: Իսկ երգերը կատարելիս երեխաներն ունենում են հետաքրքիր բեմականացման, ներկայացման հնարավորություն:

Տյառնընդառաջ կամ Տրնդեզ

Տոնին նախապատրաստվելիս նախ ծանոթացանք ծեսի բովանդակությանը, խորհրդին: Կազմեցինք սցենար, սովորեցինք ծիսական, ազգային երգեր, պարերգեր, պարեր: Մանկապարտեզում ծիսական և ավանդական տարրերով սեղան պատրաստեցինք: Յուրաքանչյուրս մեր ցանկությունը պահեցինք ու կանաչ, կարմիր թելեր կապեցինք ծառին, որից հետո դուրս եկանք բակ, կրակ վառեցինք և այդ թելերով կապվաց ճյուղը նետեցինք կրակի մեջ: Ասում են՝ կրակը վառում, տանում է ցավերն ու հիվանդությունները, և իրականացնում է մեր բարի երազանքները: Շուրջպար բռնեցինք կրակի շուրջ, երգեցինք, պարեցինք, նորապսակ-տիկնիկների գովք և օրհնություն արեցինք:

Ծառզարդար-Ծաղկազարդ, Զատիկ.

Այս ծեսերին նախապատրաստվելիս ավելի պատրաստակամ էինք, քանի որ ազգային մշակույթը, միջավայրն իր կարևոր դերն էր կատարել՝ ձևավորվելով երաժշտական ճաշակ, որը ազգային երաժշտության նկատմամբ այլ վերաբերմունք էր դրսևորում: Ծառզարդարի, Զատկի ծեսերի նախապատրաստական աշխատանքներն իրականացրեցինք Արզականի մսուր մանկապարտեզներում: Նախ ինքներս ծանոթացանք ծեսի բովանդակությանը, սովորեցինք ծիսական երգեր, պարերգեր, պարեր, ծիսական հետաքրքիր ու զվարճալի խաղեր, երգեցինք, պարեցինք ու խաղացինք սաների հետ միասին:Երեխաներին ծանոթացրեցինք եղանակային փոփոխությունների, երկրագործի աշխատանքի հետ: Հարցադրումների միջոցով պարզեցինք, թե ինչ գիտեն գարնան մասին, ինչ փոփոխություններ են կատարվում բնության մեջ գարնանը: Այնուհետև երեխաների հետ միասին դուրս եկանք բակ: Երեխաները մաքրեցին ծառերի շրջակայքը, իրենց փոքրիկ բահիկներով փորեցին ծառերի բները, ջրեցին, որպեսզի ջուրը հասնի արմատներին, ծառը սնուցվի և մեզ բերք տա, իսկ այն ծառերը, որոնք բերքատու չեն՝ ապահովեն մեզ մաքուր օդով, թթվածնով: Երեխաները խնդրեցին ծառին, որ կանաչի, ծաղկի, մեզ լավ բերք տա, թե չէ կկտրեն: Որից հետո շրջան կազմեցինք, երգեցինք «Խնկի ծառ», «Յալալի» երգերը:Խմբասենյակում երեխաների մասնակցությամբ եգիպտացորենի պայթեցվաց հատիկներով, զատիկներով, զարդարված ձվերով, գույնզգույն ժապավեններով զարդարեցինք այգու ծառերից էտած մի ճյուղ, որը գարնան խորհրդանիշն է: Հնագույն ժամանակներում հայ ժողովուրդն ունեցել է խնկենու, սոսու, կաղնու, ուռենու պաշտամունք՝ որպես անմահության, պտղաբերության, կենաց ծառի խորհրդանիշ: Եվ այդ տոնը ժողովուրդն անվանել է Ծաղկազարդ (Ծառզարդար): Այն խորհրդանշել է գարնան գալուստը: Ծաղկազարդի նպատակն է՝ երեխայի, մարդու մեջ սերմանել, սեր, հոգատար վերաբերմունք բնության հանդեպ: Երեխաները շատ ոգևորված էին այդ աշխատանքով:

Միջոցառման ծրագիր

Զատիկի նվիրված ցուցադրական պարապմունքներ /ֆլեշմոբ/

Բեմի կենտրոնում զարդարված է զատկի սեղանը իր բոլոր խորհրդանիշներով՝ ծլեցրած ցորեն , ծառի ճյուղեր՝ զարդարված ձվիկներով : Դրված են զատիկի կերակուրներ, ներկված հավկիթներ. Եկեղեցու նկարներ, խաչքար:

Հնչում է երաժշտություն և « Առավոտ լուսո» հնչյունների ներքո ներս են մտնում 2 աղջիկներ ձեռքներին վառվող մոմեր,մոտենում են սեղանին դնում մոմերը, երգի ավարտից հետո հնչում է եկեղեցական զանգերի հնչյունները, որից երեխաները կանգնում են ու արտասանում են տերունական աղոթքը ու նստում:
Հեղինակ- Երեխաներ այսօր մենք կիմանանք մի շատ հետաքրքիր պատմություն: Հայ առաքելական եկեղեցու տաղավար տոներից ամենամեծ ու գեղեցիկ տոնի <<Զատկի տոնի>> մասին:

Զատիկի շաբաթը կոչվում է ավագ շաբաթ՝ դա կոչվում է «Ծաղկազարդ»: Սա խորհրդանշում է Հիսուսի երկրորդ գալուստը, ինչպես նաև մանուկների օրհնության տոն:

Այդ շաբաթվա ընթացքում մարդիկ ձիթենու ծաղկած ճյուղերը տանում են եկեղեցի օրհնելու , դեռ հնուց մարդկանց մեջ տարածել է այն համոզմունքը, որ ձիթենու ճյուղը օժտված է ուժով, կարող է մարդկանց տալ առողջություն և գեղեցկություն, ովքեր դիպչում են այդ օրհնված ճյուղերին :Իսկ շաբաթվա վերջում , մինչև կսկսվի զատկի տոնը, մարդիկ եկեղեցուց կրակ են բերում և այդ սուրբ կրակով վառում իրենց տան մոմերը և շաբաթ երեկոյան սկսվում է զատկի մեծ տոնը՝ Հիսուսի հարության տոնը՝ ամենուր վառվում են մոմեր, հնչում է եկեղեցիական զանգերի ղողանջներ:Այս տոների մեջ է մտնում «Զատկի տոնը»:

Այսօր զատիկ է, ամենամեծը բոլոր տոներուն,
Վերջին հաղթական արարածը Քրիստոտի կյանքին:
Երկնքի կապույտն ձեզ կմաղեմ բույլ մը աստղ,
Բլուրներ են գոգ մը ծաղիկ, արև են խուրձը մը ճառագայթ
Ու երկնքեն՝ ԱՍՏՎԱԾ:

Հիսուսի հարության տոնը՝ Զատիկը՝ ամենագլխավոր քրիստոնեական ու ժողովրդական տոնն է:

Ուրախություն –ահա ինչի հետ է կապված այս հրաշալի օրը:
Եվ այս հրաշքը կատարվում է ամեն գարուն:

Հողմը փչեց հարավեն,
Ազատվեցին դաշտը ձյուներեն
Բերկրություն է ամեն տղոց
Քրիստոս հարյավ ի մեռելաո:

Առուները խոխոջացին
Ծառերն ահա բողբոջեցին,
Օդը լի է ձայնով թռչնոց
Քրիստոս հարյավ ի մեռելոց:

Տղա , աղջիկ ուրախ զվարթ,
Փթթեցին մերդ կոկոն վարդ,
Ուր քեն չունի սիրտը մարդոց
Քրիստոս հարյավ ի մեռելոց:

3 անգամ երգում են «Քրիստոս հարյավ ի մեռելոց»:

Հեղինակ----Զատիկ նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից և վերջնական իմաստով՝ վերադարձ առ Աստված:

Զատիկը միշտ տոնել են մեծ շուքով:

Մարդիկ ձու են ներկում կարմիր գույնով, այն ներկում են սոխի կճեպով ու բանական ներկերով՝ օխրայով , որդան կարմիրով, պատրաստում են չամիչով փլավ, կանաչեղեն, ձուկ , գինի կարմիր:

Մարդիկ իրար ձու են նվիրում, դա այս տոնի գլխավոր խորհուրդն է:

Ձուն խորհրդանշում է նոր կյանքի սկիզբը, իսկ կարմիր գույնը Հիսուսի թափած արյան գույնն է, հանուն մարդկային հոգիների փրկության:

Երգ ---Զատկի մասին

Ահ երեխաների ներկած ձվիկները:

Պար –Ճոր պար

Հարցեր երեխաներին---

-Ի՞նչ գույն են ներկում զատկի ձվիկները:
-Ի՞նչով են ներկում
-Ո՞րն է ձվի խորհրդապաշտական նշանակությունը
-Այն որ միջատն է , որ կապ չունի զատկի անվան հետ, բայց կրում է նրա անունը:
-Ի՞նչ է նշանակում Հիսուսի անունը:
-Ի՞նչպես են իրար շնորհավորում զատկի տոնին:

Երգ ---Չամչով փլավ:

Զատկի տոնին պատրաստում են նաև չամչով փլավ: Չամիչը հիշեցնում է մարդկանց բազմությունը, իսկ չամիչը հիշեցնում է հավատացյալ մարդկանց , որոնք քաղցրություն են հաղորդում կյանքին:

Օրհնվի ու պահպանվի ձեր դաշտն ու արտը
Այծն եւ ոչխարը, կովն ու կթանը, չութն ու գութանը:
Վարն ու վարսակը, գլուխն ու տանը:
Հանդն ու ջաղացը, ցորենն ու հացը,
Գառնսրածն ու ոչխարարածը,
Տավարարածն ու հորթարածը:

Զատիկը շարժական տոն է մեծ պահքից ամիջապես հետո մարտի 21-ից մինչև ապրիլի 26-ն ընկած ժամանակահատվածում:

Այսօր տոն է խնդություն
Շատ մեծ տոն է խնդություն:
Քրիստոսի հարության օրն է. Սուրբ Զատիկը:

Երգ ---Կարկաչը

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի, տեսական գրականության ուսումնասիրության և վերլուծության մշակված ծեսերի իրականացման արդյունքում եկա մի շարք եզրահանգումների.

- Երեխայի զարգացման և նրա անձի ձևավորման գործընթացները փոխկապված են:
- Երեխայի զարգացմանը, ինչպես նաև նրա անձնավորության ձևավորմանը նպաստող խթանները պայմանականորեն միավորում են երեք խմբի՝ կենսաբանական, սոցիալական և մանկավարժական:
- Երեխայի զարգացմանը նպաստում է զարգացնող միջավայրը, որը երեխայի զարգացման դրդող «առարկայական տարածությունն» է և համարժեք բարոյահոգեբանական մթնոլորտը:
- Նյարդային համակարգի ճկունությունն ու ընկալունակությունն առավել արդյունավետ են դարձնում ցանկացած մանկավարժական գործընթաց:
- Մանկավարժական գործոնների շարքին է պատկանում երեխայի ինքնուրույն գործունեությունը, որը խրախուսվում և ձևավորվում է մեծահասակների մանկավարժական ներգործության շնորհիվ: Ինքնուրույնության դրսևորումները խթանում են երեխայի զարգացման գործընթացը, նպաստում նոր հաջողությունների ու նվաճումների: Երեխայի ինքնուրույնության արգելակումը մեծահասակների կողմից բացասաբար է անդրադառնում և խոչընդոտում է նրա ընդհանուր զարգացման գործընթացը: Երեխայի ինքնուրույնությունը՝ նրա զարգացման և անձնավորության ձևավորման կարևորագույն գործոն է:

Փորձարկման արդյունքում.

- Մանկապարտեզում երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ:
- Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երեխաների ուսումնառությունը և զարգացումը բազմակողմանի է, քանի որ ֆիզիկական զարգացմանը զուգընթաց զարգանում է երեխայի խոսքը և լեզուն, զգացմունքները, սոցիալական շփման և իմացական կարողությունները:
- Ցանկալի է, որ մանկապարտեզները համալրվեն բազմաթիվ դիդակտիկ նյութերով, գունագեղ պաստառներով , հետաքրքիր խաղերով ,տեսաձայնասկավառակներով և համապատասխան համակարգիչներով , էկրաններով,գունավոր տպիչներով , որ 21-ր դ դարի հեռախոսասեր սերունդն ավելի հետաքրքիր ու բովանդակալից անցկացնի իր առօրյան:

Օգտագործված գրականություն

1. Նախաշավիղ

2. Թեմային առնչվող մանկավարժական գրականություն:

3. Դաստիարակի ուղեցույց

4 Երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ

5Նախադպրոցական մանկավարժություն

6. Նախադպրոցական մանկավարժություն. Նաիրա Գրիգորյան

7. Ծեսերին առնչվող գրականություն, հոդվածներ

- *Ազգային ծեսեր, տոներ. նկարագրություն*
- *Վ. Բդոյան, «Հայ ժողովրդական խաղեր»*
- *Խաղը ծիսական միջավայրում*
- *Համացանց*